Գյումրու քաղաքապետին

փոխարինող պարոն Ավետիս Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան

Այս տարի լրանում է Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի 95-ամյակը: Կառույց, որը հիմնադրել են Ավ. Իսահակյանը, Մկրտիչ Արմենը և էլի ուրիշ երևելիներ:

Տասնամյակներ շարունակ մեր գրական կազմակերպությունը ունեցել է ստեղծագործական միության կարգավիճակ: Վերջին տարիներին այն ստացել է հասարակական կազմակերպության կարգավիճակ /ոչ մեր ցանկությամբ/: Լինելով մայր կառույցի բաժանմունք, մենք չենք կարող օգտվել ո՛չ մի տեսակի դրամաշնորհից: Ուստի, դարձյալ ակնկալում ենք Ձեր ֆինանսական աջակցությունը՝ քաղաքի գրական կյանքը ակտիվ պահելու համար:

Սկսած 2000 թվականից ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքին Գյումրու քաղաքապետարանի կողմից տրամադրված դրամական միջոցների շնորհիվ կազմակերպվել են բազմաթիվ գրական միջոցառումներ, մեծարման երեկոներ, տարելիցներ, գրքերի շնորհանդեսներ, ուխտագնացություններ, մրցանակաբաշխություններ…

Այս տարի ևս Գյումրի քաղաքի գրական կազմակերպության ծրագրերը (գրահրատարակչական աշխատանքների կազմակերպում, գրական միջոցառումների անցկացում) իրականացնելու նպատակով դիմում ենք Ձեզ, ակնկալելով, որ Դուք դարձյալ նեցուկ կլինեք գրական կյանքի շարունակականությունը ապահովելու և զարգացնելու գործընթացին:

2026թ. լրանում են Մկրտիչ Արմենի ծննդյան 120, Շմավոն Թորոսյանի ծննդյան 100, Քաջիկ Գրիգորյանի ծննդյան 100, Սարո Գյոդակյանի ծննդյան 75, Գագիկ Սարոյանի ծննդյան 65 ամյակները, որոնք հարկ է նշել հավուր պատշաճի:

Տերյանական օրերին գրական պատվիրակությունը դարձյալ ցանկանում է այցելել Նաիրի երկրի բանաստեղծի ծննդավայր Ջավախք և հարգանքի տուրք մատուցել մեծանուն բանաստեղծին:

Ծրագրում ունենք նաև Արարատ Մկրտումյանի անվան և Կարապետ Հովսեփյանի անվան ամենամյա գրական մրցանակաբաշխություններ:

Նվազագույն ծախսերը, որ անհրաժեշտ են այս ամենի կազմակերպման համար կազմում են 400 000 դրամ:

Կանխավ երախտագիտությամբ՝

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի

նախագահ Անդրանիկ Կարապետյան

29.06.2026թ.

29.06.2026
11836.